

1901, թ. 1538. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 100. Մարտի, 1892, էջ 484. Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 94):

18. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔԸ

Երզնկայի արեւմտեան կողմը եւ անկէ գրեթէ կէս ժամ հեռու, Հայրապետ գիւղի մօտ (Բիւզանդիոն, 1901, թ. 1538. Ղազանճեան, Խառն նամակներ, էջ 26): Ունեցած է կամարակապ մատուռ մը, որ կործանած է: Ուխտի օրը եղած է Չապիկին յաջորդող Հինգշաբթին (Արեւել. Մամուլ, 1890, էջ 75): Ստացած է այդի մը, պարտեզ մը եւ ութսուն արտավարի չափ մշակելի եւ ջրարբի արտօրաներ (Բիւզանդիոն, 1901, թ. 1538. 1900, թ. 1060. հմմտ. Էփրիկեան, Բնաչխ. Բառարան, Բ., էջ 114):

Պալեան երբեմն կասկածած է, թէ այս վանքը Չուխտակ վանքին հետ նոյն ըլլայ (Բիւզանդիոն, 1898, թ. 351):

Ս. Լուսաւորչի վանքը իբրեւ թէ Դ. դարուն հիմնուած ըլլայ. «յաստուածապահ գաւառու Եկեղեց, յանապատիս Լուսաւորչի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս, զոր շինեալ է նոյն ինքն հաւրն մերոյ սրբոյն Գրիգորի, որ եւ ի սմին եղեալ ձեռնադրութիւն Ըստակէսի» (Թորոս Աղբար, Բ., էջ 325—326. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 98—99):

Հոս 1375ին Գրիգոր Աւետարան մը կը գրէ (հմմտ. նոյն տեղիքները) եւ Սարգիս Ս. Գրիգոր վանքի մէջ ուրիշ Ձեռագիր մը (Բաղմազէպ, 1906, էջ 256):

Այս վանքին գուցէ կը հայի հետեւեալ յիշատակագրութիւնը. «Արդ զրեցաւ սուրբ զիրքս այս որ կոչի Մաշթոց ի թուարբուրթեանս հայկազեան տուժարի Ռէ (1558) յեկեղեաց գաւառս, որ կոչի յերզնկայ ի վանքս որ կոչի Ս. Լուսաւորչի ընդ հովանեաւ Մանկոյ Ս. Նշանի եւ սուրբ Կարապետի ձեռամբ անարհեստ զրչի սուտանուն արեղի Մկրտիչի: Այլ եւ յիշեցէք ի յազաւթս ձեր գտէր Յովանէս, յոյժ փափագմամբ եւ ջերմեանդ սիրով ետուր գրել յիշատակ իւր եւ ծնողացն Պուլպուլեանին եւ իւր կողակցին Մելիհատին եւ Մսրբէին եւ այլ ամենայն արեան մերձաւորացն...» (Հ. Յ. Բօսեան, Յուլ. հայ. Ձեռ. Արձնեան վարժարանի, թ. 52):

19. Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Յանուն սուրբ Գրիգոր Լուսաւորչի Հայրապետին. Երզնկայէն քսան րոպէ հեռու. հանգած (Արեւել. Մամուլ, 1890, էջ 75 եւ 139) <sup>21</sup>. հմմտ. Ս. Լուսաւորչի վանքը:

20. ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔԸ

Պալեան Երզնկայի վանքերու մէջ լսի տնուով կը յիշէ Հերմոնի վանք մը եւ անձը որչին անոր կը մերձեցնէ Թովմաս Մեծփեցիին հետեւեալ խօսքերը՝ «Յովհաննէս վարդապետ եւ ուսուցիչ ի սուրբ ուխտէն Հերմոնի վանուց եւ աշակերտ իւր Դաւիթ» (Բիւզանդիոն, 1898, թ. 351. 1900, թ. 1103. 1902, թ. 1614):

(Շարունակելի):

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

### ՅՈՒՑԸԿ ՀՆՅԵՐԷՆ ՉԵՌԱԳՐԱՑ ԼՎՈՎԻ ԵՒ ՍՏԱՆԻՍԼԱՅԻՈՎԻ

(Շարունակութիւն):

16 (38).

### ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ԼԵՅԱՅԱՅՈՑ

1801:

ԹՈՒՂԹԻՒՆՆԵՐ՝ 94: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 36.7 × 25: — ՆԻԹ՝ բուր: — ԳԻՐ՝ բուրգիր: — ԿԱՉՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՐ՝ լաւ: — ԽՈՐԱԳԻՐԻՐ ԵՒ ԽՐԱՍԱԳԻՐԻՐ՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ անձամբ: — ՏԵՂԻ՝ Լեպուլիս (°): — ԺԱՄԱՆԱԿ՝ 1801:

Մատենա է՝ Սրբազնասրբոյ խորհրդոյ պատարագի մատուցատեար ըստ եղանակի պաշտաման քահանայապետականի. փոքրաչափազգայութեամբ ընդօրինակեալ յամի ներմարմնութեան Բանին Աստուծոյ 1801:

1. էջ 3—38, 141—188. Ճաշոցի մասեր:
2. էջ 39—46. Նախապատրաստութիւն առ սուրբ պատարագն ըստ հոսովհանի Միսալին, ի դիպօղ ժամանակի աննելի:
3. էջ 47—140. Պատարագամատոյց Լեհահայոց:

<sup>21</sup> Ս. Ամատեան Եկեղեց գաւառի մէջ կը յիշէ շատ մը հանգած եկեղեցիներ, որոնց ոմանց մօտ հասանականարար կային վանականներու համար բնակարաններ (Արեւել. Մամուլ, 1890, էջ 73 եւ 136):

17 (39).

### ՊԱՏԱՐԱՊԱՄԱՏՈՅՑ ԼԵՅԱՅՈՑ

Ժը. դար:

ԹՈՒՂԹԻՒՆՆԵՐ՝ — ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 34 × 21.5: — ՆԻԹ՝ բուր: — ԳԻՐ՝ նոսր: — ԿԱՉՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՐ՝ քայքայեալ: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ ԵՒ Փ՝ՄԱՆԱԿ՝ անձամբ. բուր Ժը. դար:

Մատենա է՝ Պատարագամատոյց Լեհահայոց:

18 (40).

### ՉԵՌՆԱԳՐ ՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ

ՁՀԱ. = 1522:

ԹՈՒՂԹԻՒՆՆԵՐ՝ 128: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 20.5 × 15.3: — ԳՐԻՉՈՒԹԻՒՆՆԵՐ՝ երկսիւն: — ՆԻԹ՝ հաստ ողորմած բուր: — ԳԻՐ՝ մեծ բուրգիր: — ԿԱՉՄ՝ փայտեայ, կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՐ՝ լաւ: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 1—2, 126—128. քղ. 33, 76 նորոգուած: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ քղ. 3, 34, 54բ, 76ա, կարմիր եւ սև: — ԼՈՒՍԱՆՅԱՉԱՐԳԵՐ ԵՒ ՉԱՐԳԱԳԵՐ՝ քղ. 3, 28, 33, 39, 40բ, 42, 45, 54բ, 76ա: — ԳՐԻՉ՝ Մկրտիչ Պատարագ: — ՏԵՂԻ՝ իւր: — ՍՏԱՅՈՂ՝ Գալուստ արքեպիսկոպոս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1522: — ՍԵՊՆԱԿՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Լվովի Հայոց Արքեպիսկոպոսարանի:

Մատենա է՝ Ձեռնադրութեան զիրք, Գր. Տաթևացոյ խմբագրութեամբ. «Մանկանադրութիւն քառասորակութեան նորածնելոյ մանկանոց, որք հրաւիրելոյ իցեն յաստիճան քահանայութեան. հարկաւորք եւ պիտանիք արարեալ մեծ վարդապետին Գրիգորի հետարի»:

Գրուածքն մասին մանրամասն տես Տաշեան, Յուլ. հայ. Ձեռ. Միւրթ. Մատենագրանի, թ. 25 (Յուլ. 141—145):

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆԻՐ. 1. Թղ. 124ա. Փառք անհատ վէհի, անկարօտ հօրի, անբաւ մեծի, աննկող բարեբարի, Հօր անկարգականին, Որդոյ սկզբնակցին, Հօրոց զպապցին, ապկնիպ արարչին, ամէնից փրկչին, Խորհրդից ազատչին, Հօր կամեցողին յախտեանս. ամէն:

Ով մանկունք նոր Սիսին  
Եւ հայրապետն պատուելի,  
Որ էք պատրաստ եկեղեցի,  
Փատարանից էք Բրիտտուսի,  
Որ հանդիպէք այժմ սասի,  
Կամ կարգաւով արքեպիսկի,  
Չի դուք էք քաղցր Եւ հեղ ուրի,  
Սուրբ Եւ մարտիր յամենայնի,  
Դուք հրեշտակաց էք նմանի,  
Եւ արքեպիսկ էք Բրիտտուսի,  
Լուսոյ նման էք գերարբի,  
Ուղ համեմից էք պիտանի:

Դուք էք բար  
մեղաւ ի Տեան Յիսուսի,  
Չձի զանկէ հոգովորի:  
Պայտանիք արատուելի,  
Ի յիսն անկեալ ձեզ ամենի.  
Չի Եւք ներէք ողորմելի,  
Մկրտիչիս անպիտանի,  
Մեղօք լցեալ ի մէջ ազմի,  
Կամ եւ սրբիմ անջնջելի.  
Դուք թողութիւն արէք ինձի,  
այս սուտանուն կրաւնաւորի,  
Չի Տէրն քաղցր է ու ողորմի,  
ինձ այս փանաղ Մկրտիչի.  
Նոյն Եւ ձեզ Տէրն ողորմեցի,  
Ի զարթաւան սուրբ Միսնի:  
Ով հայրապետքն պանծալի,  
Եւ սուրբ քահանայք յեկեղեցի,  
Չձեզ պաշտեմք արատուելի,  
յիշման աննել զիս արժանի.  
Չի Տէրն ի ձեզ միշտ գթացի,  
յահեղ աւուրն աներկի:

Գրեցաւ ձեռնադրութեան զիրքս. ի գաւառիս Իւրով առ զբանն սրբոյ Հաճատկատարի. ի հայրապետութեան Տեան տէր Սարգիս Եւ մերոյ արքեպիսկոպոսութեան տէր Գալուստի, զրքիս ստացողի: Եւ ի թողաւորութեան մերոյ Չիկմոնդի: Ձեռամբ արձար Եւ անխնայ զմոյի Մկրտիչ սուտանուն կրօնաւորի: Ի վայելումն տէր Գալուստ արքեպիսկոպոսի: Յիշատակ իրեն Եւ իր ծնողացն տէր Ստեփաննոս իր հօրն Եւ մօրն Մարգարիտ Եւ իր սրբուն Ստեփանի: Յիշեցէք զստացողքն սորա, միով Տէր ողորմեալ. Եւ զիւր ննջեցեալն զփոխեցեալն առ Բրիտտոս. ամէն: Եւ զիս զեղիկի զբշակս յիշեցէք. Եւ զիմ ծնօքս զփոխեցեալն առ Բրիտտոս. Եւ զուր յիշեալ լիջէք ի զարթաւան Բրիտտուսի. ամէն: Գրեցաւ թվականիս Հայոց ՁՀԱ. ի Հոտմայեցոյ ամիս մարտի: Դարձեալ ազաւեմ զձեզ ամեղազոր լեւորք. զրեւ խոչորութեան. կամ սպառնաց, զի կար մեր այս էք: Ազաւեմ զձեզ զամենեւեան. որք հանդիպէք տեսանելով կամ կարգաւով կամ օրինակելով, մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողաց Եւ զբողաց. Եւ ամէն ստոյաց. ամէն:

2. Թղ. 33. Այլ գրով. Բարեխօսութեամբ սրբոց՝ Հու Աստուածամենին Եւ Ովանու Կարապետին, սրբոյն Ստեփաննոսի նախոյվային: Ողորմեա ստացողի սրբոյ տէր Գալուստ արքեպիսկոպոսի Եւ իւր հօրն տէր Ստեփանոսին Եւ մօրն Մարգարիտին. Եւ իւր սրբուն Ստեփանոսին: Եւ ծնողաց նոյնն զփոխեցեալն առ Բրիտտոս. ամէն:

Գալուստ արքեպ. 1516—1548 (Կամենից, էջ 5):

19 (41).

### ԳԻՐՔ ՉԵՌՆԱԳՐ ՈՒԹԵԱՆ

ՈՂԵ = 1646:

ԹՈՒՂԹԻՒՆՆԵՐ՝ 94: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 19.7 × 16.3: — ԳՐԻՉՈՒԹԻՒՆՆԵՐ՝ միասիւն: — ՆԻԹ՝ բարակ եւ անողորմ բուր: — ԳԻՐ՝ մաքուր նոսրագիր: — ԿԱՉՄ՝ մագաղաքապատ, դրոշմեալ շրջանակով. վրան

«1595»: — ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ԼԱՆ: — ԳԱՏԱՐԿԻ 1ա—բ, 2ա, 31ա—32բ, 49բ, 94ա—բ: — ՆԿԱՐԻ 2բ. Եպիսկոպոս մը զգեստաւորուած, քաղ ի գլուխ եւ գաւազան ի ձեռքի, առջեւը՝ արեւայ մը ի ծուկը իջած, ձեռքին բացուած գիրք մը, որուն վրայ կը կարդայ: «Տուր ինձ լեզու խրատու»: — ԿԻՍԱՆՈՐԱՆԻ ԲՊ. 3ա. բազմագոյն: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԻ ԲՊ. 3ա: — ԳՐԻԶ՝ անծանօթ: — ՏԵՂԻ՝ Կամէնից: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1646:

Մատենան է.

1. ԹՂ. 3ա—30բ. «Սրատ վասն դաւազան տալոյ. վարդապետն աշակերտի իւրոյ: Մեծազոյնն ի վարդապետաց կոչեցէ զայլս ի վարդապետաց եւ արասցեն զիշերապաշտօն: Եւ զիշերապաշտամանն նախ զգեցուցանեն միարան եւ մտցեն եկեղեցի. ասեն շարական՝ Հրաշափառ. եւ զարդարեն զգաւազանն եւ բերցեն արտաքս ասելով շարական. Գաւազան զօրութեան. կալով ի ծուկն աշակերտին արտաքոյ եկեղեցոյ (՞) ի դուրս: Սղ. Գաւազան զօրութեան. փխ. Ասաց Տէր. Ընթ. Երեց...»:

2. ԹՂ. 33ա—93բ. Մահամանագրութիւն դաստիարակութեան (տե՛ս Թ. 18):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. ԹՂ. 93բ. Գրեցաւ ի քաղաքն Կամէնից. ԹՂ. ՌՂԵ. զեկա. Ը. օրն զԷրթի:

2. ԹՂ. 3ա (այլ զբէլ). «Նիկողոսոս թորոսենց արքեպիսկոպոս Լեվա Հայոց եւ Պոլսոսնայ երկրի առաջնորդ» եւ փակագիր մը:

Բնագրին մէջ տեղ տեղ մանր սրբագրութիւններ կան ուրիշ գրէն (Նիկողոսոս թորոսենց արքեպիսկոպոսէ՞). այսպէս ԹՂ. 47բ. Հաւատամքն այս պարբերութիւնը. «մի անձն, մի զէմ եւ միաւորեալ մի բնութիւն» սրբագրուած ի մի Բրիտանոս:

20 (42).

Մ Ա Շ Տ Ո Յ Զ Ե Ռ Ն Ա Դ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն

1724:

ԹՈՒՂԹՔԻ՝ 35: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 30,5 X 19,7 հմ.: — ՆԻՒԹ՝ Բուլք: — ԳԻՐ՝ շղագիր: — ԳՐԶՈՒՆ. ԹԻՒՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ լաքակազմ, մաշած: — ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ԼԱՆ: — ԽՈՐԱԳԻՐՆԵՐ ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐՆԵՐԸ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ Յ. Ա. արքեպ. Լեւախայոց: — ՏԵՂԻ՝ Լվով: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1724:

Մատենան է՝ Չեռնադրուքիւն քահանայից եւ օրհնութիւն մայրապետաց. յամի Տեառն 1724, օգտեմբերի 16, ի Լէօպոլիս:

Էջ 1. Կարգ զիւրզուած տալոյ: Առ ի աննել զխուզուած՝ պարտ է յայնուձ, զի լիցի դրօշեալ...: Քարոզէ Աւագերէցն. Միաբան ազաչեցուք...: Ազօթք՝ Տէր մեր նայեաց...: Այսպէս կը շարունակուի փոքր աստիճանաց տուչութիւնը մինչեւ ցրահանայութիւն:

Էջ 35. Յաղագս զլեցման նորվեցացից ընդ կանոնօք ամէներանեալ հօրն Պէնէտիթթոսի: Աւուրբ միով յառաջ քան զգեցուցանել զնորվեցեացն...:

Էջ 42. Կերպ դաւանութեան կուսանաց կրօնուհեաց, այսինքն փոփոխային: Յորժամ ոք ի կուսանաց կրօնիւղաց (sic) յեա աւարտման տարւոյն նորեկութեան...:

Էջ 49. Յաղագս օրհնութեան եւ սրբազնացութեան կուսանաց: Օրհնութիւն եւ սրբազնացութիւն կուսանաց պարտի լինել...:

Էջ 66. Լիթանիաք առ ամենայն սուրբս, որք ասին ի ժամանակի օրհնութեանց կուսանաց կրօնեղեաց...:

Էջ 69. Klatwa:

Էջ 71. Յուցագ: ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Էջ 70. Գրեցաւ ձեռօք Յ. Ա.՝ Արհնակոպոսի Լեւայ երկրի Հայոց:

21 (43).

Մ Ա Շ Տ Ո Յ Լ Ե Հ Ա Յ Ա Յ Ո Յ

1728:

ԹՈՒՂԹՔԻ՝ 127: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 28,5 X 18 հմ.: — ՆԻՒԹ՝ Բուլք: — ԳԻՐ՝ Բուլք: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔԻ՝ մաշած: — ԽՈՐԱԳԻՐՆԵՐ ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐՆԵՐ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ անծանօթ: — ՏԵՂԻ՝ Լեօպոլիս: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1728:

Մատենան է՝ «Մաշտոց Հայոց ուղղափառաց հրամանաւ գերապայծառի եւ ամենապատուոյ տեառն Յօհաննու Տօրիայ Ավիւղի զինովիչի, արհիպիսկոպոսի Լէօպոլիսեցոյ Հայոց: Սրբազրեալ եւ կարգաւորեալ ի Լէօպոլիս յամի Տեառն 1728, ապրիլի ամսոյ ժն»:

ԹՂ. 1բ. Երջարեակաւ Յովհ. Աւգոստինովիչի, յատիներէն, գրուած յամի 1728, մայիս 15: Հաստատուած 1734ին: Նոյնը նաեւ հայերէն խմբագրութեամբ.

Joannes Tobias Augustinowicz Dei et Apostolicae Sedis Gratia, Archiepiscopus Leopoliensis, et in regno Poloniae, Magnoque Ducatu Lithuaniae, Armenorum, Episcopus Moldavice ejusdem Nationis, Sanctissimi Domini nostri [Papae ejus nominis Aemennii X J]. Protatus Domesticus, et Assistens.

Cum Liber Ritualis Armeni Մաշտոց vulgariter nuncupati, a Perillastri, et Admodum Reverendo Stephano Stefanowicz Roszka, Sae. Th. Doctore, Missionario Apostolico, Officiali Nostro per Pokutiam, ac Preposito Stanislavoviensi concinnatus, per Theologos a nobis Deputatos revisus fuerit, nihilque Orthodoxae Fidei, ac Bonis moribus repugnans in re contineat, imo cum bono Ordine ceremonias in administratione Sacramentorum una simul cum Informationibus ad mentem Sacrorum Canonum adaptatis sit refertus ac defectibilitates in antiquis Armenis Ritualibus contentas ob carentiam

՝ իմացիր՝ Յովհաննէս Ավիւղի զինովիչ:

quarundam necessarium Orationum perasumptas ex Latino Rituali (juxta generalem Regulam, quae Armenis permittit ea, in quibus deficiunt, a Latinis desumere) quasdam Orationes, et caeremonias sufficienter suppleat, et restauret, ideo, ut idem Liber tanquam Maiori Gloriam Dei, et utilitati nostrarum Ecclesiarum apprimè inserviens, quantocius ex Typographica Saepia Publicam lucem aspiciat, Auctoritate Nostra Ordinaria Licentiam, et facultatem, si ijs, ad quos pertinet ita videbitur Damas, et concedimus, in quorum Fidem: Datum Leopoli in Residentia nostra Archiepiscopali hac die 15. mensis Aprilis, Anno Dni 1728.

I. A. Կնիք Leop. Armen.

Aprobamus.

2ա. Յօհաննէս Տօրիայ Ավիւղի զինովիչ, Աստուծոյ եւ Առաքելական Աթոռոյն Արհիպիսկոպոս Լէօպոլիսի, եւ ընդ բոլոր թագաւորութեանն Լէւայ, եւ մեծի դքսութեան Լիթվանիոյ, Հայոց եպիսկոպոս Մօլտավիոյ նոյն Ազգին Հայոց, սրբազան Տեառն մերոյ Փափին Բրէլազ, եւ Առնթերակաց:

Յորմէ հետէ Աստուածային զթութեամբն յԱրհիպիկան աստիճանն բարձրացաք, զպատշաճաւոր հոգ յանձին կալաք, զի, ըստ սրբազան ժողովոյ զձեռքն, Առաջնորդական պաշտաման մերում բաւական աննելով, զբարեկարգութենէ եկեղեցեաց մերոց զբուռն արկանէաք: Եւ քանզի եկեղեցին Աստուծոյ զոչինչ սրբագոյն, եւ զերազանցադոյն ունի քան զսուրբ խորհուրդս, զորս Քրիստոս Տէրն մեր վասն փրկութեան ազգի մարդկան սահմանեաց, զգիրքն, հասարակաբար Մաշտոց կոչեցեալն, յորում կարգն պաշտելոյ զՍրբազան խորհուրդս, եւ զայլ արարողութիւնս կատարելոյ, պարտնակի, արամադրել յանձն առաք: Զոր ի ձեռն Աստուածաբանից մերոց, եւս առաւել ի բարձրապայծառ Տեառն Ստեփանոսի Ստեփանեան Աստուածաբանութեան վարդապետին, զհին ձեռնագիր Մաշտոցս ընդ միմեանս բաղդատելով, եւ իբր զանհուն սխալութիւնս, որք ոչ միայն ընդգէմ իմացման աղօթիցն, այլ եւ ընդգէմ իսկ ուղղափառ հաւատոյ մերում սիրեալք էին, սրբագրել, եւ զսրբագրեալն կարգաւ յօրինել, նաեւ զհարկաւոր խրատոն իւրաքանչիւր խորհրդոցն, եւ արարողութեանցն յառաջ զնել, եւ որ ինչ պակաս էր ի մեր Մաշտոցն, ի Հոմէականէն, հետեւելով շաւղաց Նախորդացն մերոց, ատեալն առադրել ջանացաք: Արդ զի եկեղեցեաց մերոց հոգաբարձու բարօխքն, ի բաց թողեալք զայլ Մաշտոցս, այսու միայն, զոր մեք՝ Արհիպիկան Հեղինակութեամբ մերով աւփորձեցաք, եւ հաստատեցաք, այսուհետեւ վարեցին, զիսիզմ մտաց նոցին ծանրացուցանելով, պարտա-

ւորեմք: Գրեցաւ յԱրհիպիկան Պաղատան մեր ի Լէօպոլիս: Յամի Տեառն 1728, Ապրիլի ամսոյ ժն:

Յ. Ա. Արհիպիսկոպոս Լեւայ երկրի Հայոց ի Լէօպոլիս:



1. ԹՂ. 3ա. Հասարակ խրատք յաղագս այնոցիկ, զորս ի պաշտել զսուրբ խորհուրդս հասարակաբար պահել պարտ է:

2ի այնոցիկ, որք ի հին սահմանագրութեանց կաթողիկէ եկեղեցոյն...:

2. ԹՂ. 4ա. Յաղագս բարեօք պաշտելոյ զխորհուրդն Մկրտութեան: — Յաղագս նիւթոյ մկրտութեան: — Յաղագս կերպի մկրտութեան: — Յաղագս պաշտօնէի մկրտութեան: — Յաղագս մկրտելոյ զտղայս: — Յաղագս կնքահարց: — Յաղագս ժամանակի եւ տեղոյ պաշտելոյ զմկրտութիւնն: — Յաղագս սրբազան իւրոց, եւ այլ հարկաւորաց: — [7ա—14բ այլ զբէլ, նորոգուած:]

3. ԹՂ. 7ա. Կարգ մկրտութեան Տղայոց: — Քահանայն զամենայն ինչ յառաջ ի պատրաստի ունելով...:

4. ԹՂ. 11բ. Յաղագս խորհրդոյ Իրօշմն:

5. 15ա. Յաղագս Մկրտութեան զարգացելոց: — Կարգ մկրտութեան զարգացելոց: — 21ա. Կարգ լցուցանելոյ զթողեալն ի վրայ զարգացեալ մկրտելոցն:

6. ԹՂ. 21ա. Օրհնութիւն ջրոյ մկրտութեան: «Յեկեղեցիս ուր չիք այն զովեալք սովորութիւն...»:

7. ԹՂ. 22ա. Կարգ օրհնելոյ զաւագանն մկրտութեան ի տօնի Յայտնութեան Տեառն, կամ արտաքոյ նորին, յորժամ ոչ գտցի օրհնեալ ջուր յաւագանն: Նախ լուսացի ի մաքրեցի...:

8. ԹՂ. 23ա—26բ. Յաղագս խորհրդոյ ապաշխարութեան: — Յաղագս խորհրդոյ ապաշխարութեան: «Չապաշխարութեան սուրբ խորհուրդն, զոր Քրիստոս տէր մեր սահմանեաց...: — Կարգ պաշտելոյ զխորհուրդն Ապաշխարութեան: — Կարգ Արձակման: — Յաղագս արձակելոյ զնորվեալն յարտաքին ատենին: — Յաղագս արձակելոյ զնորվեալն, որ յետոյ մեռաւ: — Յաղագս եղանակի արձակելոյ ի կախակայութենէ, կամ ի բանագրանէ արտաքոյ, կամ ի մէջ խորհրդոյ խոստովանութեան:

9. ԹՂ. 26բ—30բ. Յաղագս ամենասուրբ խորհրդոյ Հաղորդութեան: — 26բ. Յաղագս ամենասուրբ խորհրդոյ Հաղորդութեան: — Թէպէտ մեծ, եւ մտադիւր հոգ տանելի է...: — 27ա. Կարգ պաշտելոյ զսուրբ Հաղորդութիւնն: — 28ա. Յաղագս գատակական Հաղորդութեան: — 28բ. Յաղագս Հաղորդութեան հիւանդաց:

- 10. Թղ. 30բ. Յաղագս վերջին օժմանն: — 30բ. Յաղագս խորհրդայ վերջին օժման: «Չվերջին օժման խորհուրդն...»: — 31բ. Կարգ պաշտելոյ զխորհուրդն վերջին օժման: «Արդ քահանայն, որ պաշտելոյ է զխորհուրդս զայս, հոգասցի որքան հնար է...»:
- 11. Թղ. 33բ—46ա. Յաղագս այցարարութեան եւ հոգոյ հիւանդաց: — Օրհնութիւն հիւանդացեալ մանկանց: — Եղանակ օղնելոյ մեռանողաց: — Կարգ յանձնարարութեան հոգւոյն:
- 12. Թղ. 46բ. Յաղագս թաղման: — Կարգ թաղման: — 53բ. Օրհնութիւն զերեզմանին եւ այլն:
- 13. Թղ. 62ա—70ա. Յաղագս խորհրդայ ամուսնութեան: — Յաղագս խորհրդայ Ամուսնութեան: Բարօխն, յորժամ իմանայ...: — Կարգ հոշակելոյ զխորհուրդն Ամուսնութեան: — Օրհնութիւն մատանեաց: — Կարգ օրհնելոյ զամուսնութիւն: — Օրհնութիւն ամուսնութեան: — Օրհնութիւն Աւագաստի: — Օրհնութիւն փեսային զկնի Հարսանեացն: — Օրհնութիւն հարսին զկնի Հարսանեացն: — Օրհնութիւն կնոջն զկնի որդեծնութեան նորա:
- 14. Թղ. 70բ. Յաղագս օրհնութեանց հասարակ խրատք:
- 15. Թղ. 71ա. Կարգ օրհնելոյ զՂուր:
- 16. Թղ. 73ա. Ի տօնի Յայտնութեան Տեառն օրհնութիւն ոսկւոյ, խնկոյ, եւ զրմոյ:
- 17. Թղ. 73ա. Ի տօնի Տեառնընդառաջին. օրհնութիւն մոմեղինաց:
- 18. Թղ. 74ա. Օրհնութիւն մոմեղինաց արտաքոյ աւուր Տեառնընդառաջին...:
- 19. Թղ. 74ա. Ի Չորեքշաբթի մոխրոյ:
- 20. Թղ. 75ա. Ի կիրակէ Ծաղկազարդին օրհնութիւն ոստաց:
- 21. Թղ. 76ա. Ի նմին աւուր Ծաղկազարդին. Արարողութիւն զոնրացին:
- 22. Թղ. 77ա. Ի մեծի Հինգշաբթի. Կարգ արձակելոյ զապաշխարոյս:
- 23. Թղ. 81ա. Կարգ Ոսնյուային:
- 24. Թղ. 84բ. Ի Չատկին Յարութեան Տեառն: Բացումն Գերեզմանին Տեառն:
- 25. Թղ. 85ա. Ի Չատկին. օրհնութիւն Տանց:
- 26. Թղ. 85բ. Ի Տօնի վերափոխման սրբուհոյ Աստուածածնին. օրհնութիւն խոտոց եւ պողոց:
- 27. Թղ. 86բ. Օրհնութիւն նոր տան:
- 28. Թղ. 87ա. Օրհնութիւն տանց յորում եւ պիտոյ իցէ ժամանակի:
- 29. Թղ. 87բ. Օրհնութիւն Տեղոյ:
- 30. Թղ. 87բ. Օրհնութիւն Ուտելաց:
- 31. Թղ. 88ա. Օրհնութիւն Հացի վասն հիւանդաց:
- 32. Թղ. 88բ. Օրհնութիւն Կաթնեղինաց:
- 33. Թղ. 88բ. Օրհնութիւն Պարզ ձիթոյ վասն հիւանդաց եւ այլ պիտոյից:

- 34. Թղ. 89ա. Օրհնութիւն նոր Պաղոց:
- 35. Թղ. 89ա. Օրհնութիւն հասարակ ի վրայ Արմատեաց եւ Այգեաց:
- 36. Թղ. 89ա. Օրհնութիւն Ընդոյ այսինքն՝ Սերմանց:
- 37. Թղ. 89բ. Յատուկ օրհնութիւն Ուլաին:
- 38. Թղ. 89բ. Օրհնութիւն հասարակ իրաց, որպէս Ալեր, Ուլաի, եւ այլոց:
- 39. Թղ. 89բ. Օրհնութիւն Սոտոց որպէս Փեքենայի, Վարդից եւ այլոց:
- 40. Թղ. 90ա. Օրհնութիւն սրոյ եւ իցէ խնկոյ կամ ծխանելեաց:
- 41. Թղ. 90ա. Օրհնութիւն Ամանոց:
- 42. Թղ. 90ա. Օրհնութիւն նոր նաւի:
- 43. Թղ. 90բ. Օրհնութիւն Ուռկանի:
- 44. Թղ. 90բ. Օրհնութիւն ջրոց եւ զեւտոց եւ ջրհորաց:
- 45. Թղ. 90բ. Օրհնութիւն Վարդարանաց կամ Պսակաց:
- 46. Թղ. 91ա. Օրհնութիւն Պրօշի:
- 47. Թղ. 91ա. Ճանապարհորդարան: — Օրհնութիւն ճանապարհորդաց, եւս առաւել Ուխտաւորաց, որք առ սուրբ տեղիս երթան:
- 48. Թղ. 92ա. Օրհնութիւն ուխտաւորաց զկնի դարձմանն:
- 49. Թղ. 92բ. Յաղագս Թափօրից:
- 50. Թղ. 93բ. Յաղագս Թափօրին ի Տօնի Ամենասուրբ Մարմնոյն Բրիտոսի:
- 51. Թղ. 94ա. Յաղագս Թափօրից որք արտաքոյ տօնի Մարմնոյ Տեառն սրբութեամբ լինին:
- 52. Թղ. 94բ. Յաղագս Թափօրի ի տեղափոխութեան նշանաւոր նշխարաց սրբոց:
- 53. Թղ. 95ա. Մաղթանք ի մերժել զմրրիկ:
- 54. Թղ. 95բ. Մաղթանք ի խնդրել զանձրեւ:
- 55. Թղ. 96ա. Մաղթանք ի խնդրել զպարզութիւն օղոյ:
- 56. Թղ. 96բ. Մաղթանք ասելիք ի ժամանակի սղութեան հացի եւ սոժու:
- 57. Թղ. 96բ. Մաղթանք ի ժամանակի մահացութեան եւ ժանտամահու:
- 58. Թղ. 97ա. Մաղթանք ի ժամանակի պատերազմի:
- 59. Թղ. 98բ. Մաղթանք յորում եւ իցէ նեղութեան:
- 60. Թղ. 99ա. Մաղթանք վասն զոհանալոյ զԱստուծոյ յաղագս ընկալեալ բարութեան նորին:
- 61. Թղ. 99բ. Աղօթք ընդդէմ թռչնոց:
- 62. Թղ. 100ա. Օրհնութիւն ի ժանտամահու Անասնոց:
- 63. Թղ. 100բ. Կախարդութեանց եւ թողչութեանց մերժումն:
- 64. Թղ. 101բ. Օրհնութիւնք զորս եպիսկոպոստներ կամ քահանայք, որ զիջխանութիւն ի նոցանէ ունին, առնեն: — Օրհնութիւն քահանայական զգեստոց առ հասարակ:

- 65. Թղ. 102ա. Օրհնութիւն Պատառաց կամ թէ կաւոց որովք սուրբ սեղանն ծածկի:
- 66. Թղ. 102ա. Օրհնութիւն գործորալաց:
- 67. Թղ. 102բ. Օրհնութիւն Հաղորդատիւց եւ բազմոցին, վասն պահելոյ ի նմին զսուրբ Հաղորդութիւնն: Օրհնութիւն նոր խաչի: Օրհնութիւն Պատկերաց Տեառն մերոյ Յիսուսի Բրիտոսի, Երանուհոյ Կուսին Մարիամոյ, եւ այլ Սրբոց:
- 68. Թղ. 103ա. Օրհնութիւն նոր Զանկակի, մինչեւ եպիսկոպոսն սրբազործեսցէ զնա:
- 69. Թղ. 103բ. Կարգ օրհնելոյ եւ զնելոյ զնախկին վէմն վասն շինման եկեղեցւոյն:
- 70. Թղ. 105ա. Կարգ օրհնելոյ զնոր Եկեղեցի, կամ զհրապարական Աղօթանոց, զի ի նմա ամենասուրբ Պատարագն կատարել կարասցէ:
- 71. Թղ. 106բ. Կարգ հաշտեցուցանելոյ զպղծեալ Եկեղեցին:
- 72. Թղ. 107բ. Կարգ օրհնելոյ զնոր գերեզմանատուն:
- 73. Թղ. 108ա. Կարգ հաշտեցուցանելոյ զպղծեալ զգերեզմանատունն, թէ կցեալ իցէ եկեղեցւոյն, թէ զատուցեալ, ուր եկեղեցին ոչ է պղծեալ:
- 74. Թղ. 109ա. Յաղագս Երզնեցուցանելոյ զդիւահարս:
- 75. Թղ. 114բ. Կարգ այցարարութեան Եկեղեցեաց, բարօխէից եւ ժողովրդեան:
- 76. Թղ. 116բ. Եօթն Սաղմոսք ապաշխարութեան ընդ Լիթանիայից ամենայն սրբոց: Չորս վասն հիւանդաց, մինչ վերջին օժումն առնուն, կամ վասն այլ հարկաւորութեան ասին ծնրադրեալք:
- 77. Թղ. 120բ. Կերպք գրելոյ ի գրեանս, զորս Բարօխն ունիլ պարտական են: — Բարօխն ունիցի զչորս գրեանս...:
- 78. Թղ. 121բ. Կերպ գրելոյ զկացութիւն հոգւոց յերրորդ գրքին: — Իւրաքանչիւր տոհմ որոշապէս ի գիրքն գրեսցի...:
- 79. Թղ. 122ա. Կերպ գրելոյ զմեռեալս ի Դ. գիրքն:
- 80. Թղ. 122բ. Յանկ նշանաւոր իրաց Մաշտոցիս այսորիկ (այբուբենական):
- 81. Թղ. 123ա. Մեկնութիւն ոմանց բառից կանոնական իրաւանց որք ի Մաշտոցս յայտնի գտանին:
- 82. Թղ. 123բ. Կարգ օրհնելոյ զհարսն եւ զփեսայն նախ քան զօրհնութիւն ամուսնութեան: — Ուր է սովորութիւնս այս Հարսն եւ փեսայն աւուրբ միով յառաջ...: պարտին խոստովանիլ... Աղ. Փառք Քեղ թագաւոր յաւիտենից...:
- 83. Թղ. 124ա (այլ գրով). Երգ առ Հոգին սուրբ. Եկ սրբարար ստեղծող հոգի,

- զմիտս այս առնել քոյոց արի... լից վերնահան զեղմամբ շնորհի. զոր դու ստեղծեր, զսիրտ մաքրելի...:
- 84. Թղ. 124բ. Լիթանիայք առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայաստանեայց:
- 85. Թղ. 125բ. Կարգ ի զգեստոցանել զՏղայս զգեստիւ Սուրբ Գայեթանոսի ի յուխտէ: Թղ. 126բ դատարկ:
- 86. Թղ. 127ա/բ. Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ ըստ Պուլլային Բիտոսի Դ.ին, եւ պատուելի Դրիտանդինոյ: Ասով կ'աւարտի:

(Շարունակելի:)

**ԿԱՐԸՊԵՏ ԱՐԹԻՆ ՓԵՇԸ ՏԵՆՈՒՏԵՆԸ  
ԿՈՒՍԵԿԵԼ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՌԱՎՈՐԵՐԶ  
ԼԻԹԱՆԵՆԻ  
(1816—1873)**

ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Հոյ Աղլի պատմութեան մէջ եղած են զէմքեր, որոնք հակառակ իրենց կարկառուն, արդիւնագործ ու պատուաբեր զործունէութեան՝ մնացած են ժամանակակիցներուն քիչ ծանօթ, իսկ յաջորդ սերունդներէն մոռցուած: Այդպիսի կարկառուն զէմք մըն է վսեմապատիւ Կարապետ Արթին Փաշա Տաւուտեան:

Թերթեցէք իր ժամանակակիցներու մասին գրուած մէկէ աւելի հայ կենսագրականներ, որոնք լեցուն են շատ մը աննշանակ անձինքներու մասին նոյն իսկ մանրամասն կենսագրութիւններով, բայց ի զուր պիտի փնտռէք հոն գոնէ համառօտ յիշատակութիւն մը Տաւուտ Փաշայի պէս կարեւոր անձնաւորութեան մը մասին: Շեշտելու համար Կարապետ Արթին Փաշայի մեծարժէք անձնաւորութիւն մ'ըլլալը՝ կը բաւէ եթէ հոս անմիջապէս յիշեմ թէ ան մեծ Larousseի<sup>1</sup> եւ La Grande Encyclopédie inventaire raisonné des sciences, des lettres et des arts<sup>2</sup> ի մէջ պատուոյ տեղ զբաւած է:

Հետեւաբար ուշ մնացած արգային պարտականութիւն մըն է որ պիտի կատարենք խօսելով այստեղ Տաւուտ Փաշայի կեանքին, հանրային գործունէութեան եւ գրական արդիւնքի մասին:

<sup>1</sup> Tome VI, p. 100.  
<sup>2</sup> Tome XIII, p. 919.